



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10633

658

7-39

57
p. 1038

150

2002

Handwritten notes at the top of the page, including the name "Պ. Տեմրյան" and other illegible scribbles.

ԱՌԱՋՆՈՐԳ
ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ
Կ Ա Մ
ՏԱՐԵՐՔ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

ՍՄՕՆ ԶԷՕՄԱԿԻՏԱՆ
Թղթակից-Ուսանող Բարիգի Առեւտրական
գործնական վարժարանին
(Ecole Pratique de commerce de Paris)

ԾՐԱԳԻՐ

Պատմութիւն վաճառականութեան եւ ուսումնասիրութիւնը վաճառականութեան ամէն ճիւղերու վրայ. — Առեւտրական Օրէնսգիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն. — Թղթակցութիւն Հայ. Տանկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր զիւտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական սակարանական եւ պանքայի հաշիւներ եւ այլն.

ՀԱՍՏՐ Բ. — ՏԵՏՐ Գ.



Կ. ՊՈԼԻՍ
ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1901

Գ. Տեմրյան Մամիկոնի տակ է:

ՆԱՄԱԿ ԳՐԵԼՈՒ ՄԵԹՈՏԸ

Սկզբունքներ եւ Սովորութիւններ

Քանի մը Խորհուրդ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՃԻ ՎՐԱՅ

« Ենթադրեցի՛ք որ գործի մը վրայ փոխանակ
նամակով խօսելու, հեռագիրով պիտի խօսիք :
Արդ, ձեր մտածման այս կմախքին էիջ մը գի-
րութիւն տալու համար կրկնեցիք բառերուն թիւը
եւ կ'ունենեմք առեւտրական անբերի նամակ մը » :

ՄԻԻԱՐԳ ՄԼՐԻԹ

« Քաղաքավարութեան պահանջներէն մին է
նամակ մը ընթերցելի կերպով գրել » :

ԷՅԺԼՆ ԼԷՅԳԻ

Վաճառականները, գրէթէ միշտ հետու գտնուելով ի-
րարմէ, թղթակցութեան միջոցաւ միայն կրնան իրարու հետ
յարաբերութիւն հաստատել, իրենց շահերուն վրայ բանա-
կցիլ, իրենց գործառնութեանց վրայ զիրար լուսարանել,
զանազան երկիրներու սովորութեանց, օրէնքներուն, պէտ-
քերուն ու բերքերուն վրայ տեղեկութիւններ առնել, զը-
նումներ, վաճառումներ, շահագիտութիւններ, պայմանա-
դրութիւններ ընել ևն. : Հետեւապէս, թղթակցութիւնը
վաճառականութեան հոգին է և էապէս կ'ազդէ վաճառ-
տան մը գործերուն բարգաւաճման կամ յետադիմութեան
վրայ, թղթակցին աւելի կամ նուազ ճարտար ըլլալուն հա-
մեմատ : Եթէ թղթակցութիւնը պէտք եղած խնամքով չկա-
տարուի, կրնայ իրարմէ պաղեցնել երկու թղթակցի վաճա-
ռականներ և պատճառ ըլլալ որ առևտրական կարևոր գոր-
ծեր յանձնուին աւելի ուշագիւր մրցակիցներու : Ընդհակա-
ռակն փութիտ, աշխոյժ և գիտակցօրէն կատարուած թղ-
թակցութիւն մը յարաբերութիւնները կը մտերմացնէ և նոր
գործեր, նոր առուտուրներ կ'ստեղծէ : Առևտրական տուն

ՂՅՈՅՍ ԻՌԻՅՐ ԻՍՍՍՅ

մը յաճախ կը դատուի իր թղթակցութենէն, ճիշտ ինչպէս որ մարդ մը կը կարողանայ լեզուէն իր արարողութիւնէն: Կը հետեւի թէ ամենամեծ խնամք տանելու է թղթակցութեան կարեւոր ճիւղին, որ այսօր անհետ կորսուած ուղղակի թղթակցութիւն մը ի գործ կը դնէ առեւտրական տան մը յաճախութեան վրայ: ԻՍՂԻՅՈՅՍ

Առեւտրական նամակներ գրել կարենալու լաւագոյն և գործնական միջոցն է, կ'ըսուի, առաջնակարգ վաճառատուններու ընդօրինակութեան տետրակներն ուսումնասիրել: Իրաւ, ճիշտ է աս, բայց միւս կողմէ ինչ ինչ անպատեհութիւններ կան: Նախ, քիչեր միայն իրենց տրամադրութեան ներքե կրնան ունենալ այս տետրակները, և յետո՛յ այս ուսումնասիրութիւն միշտ սա մեծագոյն անպատեհութիւնն ունի որ առանց մէթոտի, առանց վերլուծումի, առանց կանոնի կը կատարուի: Արդ, կանոնները, որք դիտողութիւններէ ծնունդ կ'առնեն, աւելի լաւ դնահատել կուտան ուսումնասիրուած նամակներուն արժէքը, որով մարդ ինքնաբերաբար և վստահաբար կրնայ գրել և է նամակ, անոններու չենթարկուած լաւագոյն օրինակներն իսկ օգտակարութիւն չունին և փոխադարձաբար կանոններն ալ մեծ քանի մը չեն ծառայել թէ լաւ նմոյշներ չենրկայացնեն: Եւ յստից մարտութիւնները, որք ամէն օր կը հաստատուին դործնական կեանքի մէջ, պարտաւորեցին մեզ աւելի ոյժ տալ թղթակցութեան ճիւղին, ոչ թէ առեւտրական նամակներու պարզ հաւաքածոյ մը միայն ներկայացնելով, այլ ընդունուած օրէնքները, կանոններն ալ բացատրելով և առեւտրական թղթակցութեան ընդհանուր սկզբունքները պարզելով: Ոմանք կ'ըսեն թէ դժուար է մէթոտիկ կերպով սովորել առեւտրական թղթակցութիւնը, որ դէմք կը փոխէ միշտ: Այս քան անորոշ նիւթ մը ինչպէս վերլուծել ճշտիւ կամ վերածել հաստատ սկզբունքներու: — Ասիկա, իրաւ, լուրջ առարկութիւն մ'է որ սակայն հիմա գոյութեան պատճառ չունի: Առեւտրական նամակները, որք դատ զատ առնուելով իրենց մէջ ունէ նմանութիւն, ունէ հանդիսութիւն չունենալ կ'երևին, ընդհակառակն ամբողջովին առնելով սերտ

առնչութիւն ունին և կրնան մէթոտիկ կերպով վերածուիլ ընդհանուր բաժանումներու: Յանձնակատարը, վաճառականը, պանքէռը, նաւայարդարը, գործարանատէրը, ամենքն ալ պէտք չունին իրենց յաճախորդներուն կացութեան վրայ տեղեկութիւն առնելու, ապսպրանքներ կամ պահանջումներ ընելու, գանգատներ յայտնելու: Հետեւապէս, մեր տուած օրինակները կրնան օգտակար ըլլալ ամէն դասակարգէ վաճառականներու, որոց պէտքերն սկզմամբ նոյն են, թէև իրենց գործառնութիւնները տարբեր կ'երևան: Այս պատճառաւ, թղթակցութեան ընդհանուր նիւթերը քանի մը գլուխներու բաժնած ենք, իւրաքանչիւրին վրայ յառաջաբան մը դնելով և ընդունուած սովորութիւններն ու կանոնները պարզելով: Ի՞նչքան առարկուի թէ այս կերպով ընթացիկ նամակները միայն կարելի պիտի ըլլայ գրել, բայց ճիշտ մեր նպատակն ալ ա՛յդ է: Իսկ այն բացառիկ նամակները, որք արդէն հաղուադէպ պարագաներու մէջ միայն ծնունդ կ'առնեն, չեն կրնար մտնել այս դասակարգութեան մէջ, քանի որ, այդքան անորոշ նիւթերու վրայ ինչ օրինակ ալ տրուի, ամէն թղթակից նորէն իր բնական ընդունակութեան կամ առած կրթութեան աստիճանին համեմատ ստիպուած է շարժիլ:

Ընդօրինակութեան Տեսք

Այս օժանդակ տետրը, ուր կ'ընդօրինակուին վաճառատան մը կողմէ զրկուած նամակները, յատկապէս հրամայուած է Օրէնքին կողմէ: Լսկէ ալ կը հասկցուի թէ օրէնսդիրը ո՛րքան կարեւորութիւն կուտայ անոր: Ըսուած է թէ վաճառականին խիղճն իր տետրակներուն մէջ կը ցուանայ: Անշուշտ այս խօսքն ընդօրինակութեան տետրին կ'ակնարկէ, վասն զի հո՛ն է որ վաճառականը կը խօսի, կը գործէ և իր ընթացքը կը պարզէ իր բոլոր ճշմարտութեանը մէջ: Ընդօրինակութեան տետրակը, անտարակոյս, օժանդակ տետրակներուն ամէնէն կարեւորն է հաշիւի, իրաւունքի և առեւտրական յարաբերութեանց տեսակէտով:

1. — Հաշիւի տեսակէտով, ընդօրինակութեան տետրը կրնայ ծառայել իբր ընթացիկ հաշիւի տետրակ մը, վասնզի օ-

րէնք է որ նամակներու մէջ որոշապէս կը գրուի թղթակցի մը պարտական կամ պահանջող հաշիւը: Ուրեմն կը բաւէ թղթակցի մը զրկուած նամակներն աչքէ անցընել անոր հաշիւն հանելու համար:

2.— Իրաւունքի տեսակէտով, ընդօրինակութեան տեսքը հզօր ապացոյց մը կ'ըլլայ վաճառականին ձեռքը, որ ի հարկին կրնայ անով իր իրաւունքն հաստատել դատարաններու առջեւ:

3.— Վերջապէս, առևտրական յարաբերութեանց տեսակէտով, վաճառականը այս տեսրակին մէջ կը գտնէ իր բոլոր գործառնութեանց պատմութիւնը, և հետեւապէս կըրնայ իր գրած կամ իրեն գրուած նամակներն աչքէ անցընել և կատարած գործերը վերաքննել:

Յուշատեսք.— Ընդօրինակութեան տեսրակին վերջը յուշատետր մը կայ, որով անմիջապէս կը գտնուի թղթակցի մը զրկուած նամակը: Մէն մի թղթակցի անունը գրուած է հոն այբուբենական կարգով, որուն դէմը կ'նշանակուի թիւն այն էջին ուր ընդօրինակուած է նամակը: Այս թիւն յուշատետրին մէջ գրելէ ետքը, ընդօրինակուած նամակին լուսանցքին վրայ ալ կը գրուի Յուշատեսք բառը կամ պարզապէս Յ գիրը, և անոր քով ա'յն էջին թիւը, որուն վրայ ընդօրինակուած է վերջին նամակը: Այս թիւերը կը կազմեն շղթայ մը որ մեծապէս կը դիւրացնէ նամակ մը փնտրուել գտնելու գործը:

Ընդունուած նամակները ծրարելու համար սովորութիւն է երկայնութեամբը երկուքի ծալել, ետևը, թուղթին վերի կողմը գրել նամակին թուականը, անոր տակ թղթակցին անունը, և վերջապէս պատասխան — նամակին թուականը: Յետոյ նամակները, թուականի կարգով, իրարու վրայ կը դնեն և կը զետեղեն մէն մի թղթակցի սկզբնատառը կրող խորշի մը մէջ: Այս նամակներն հոն կը մնան ամբողջ տարին, պէտք եղած ատեն աչքէ անցուելու համար, բայց յաջորդ տարուան առաջին ամիսներուն մէջ կը ծրարուին, կ'առասանուին և վրան սա բառերը կը գրուին « — Նամակներ 19... տարւոյ »:

(Շար.)

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ն Ե Ր Ո Ւ Վ Ր Ա Յ

Դ Ա Ս Ը Ն Թ Ա Յ Բ

Առևտրական եւ ծարսարարութեան օրէնսդրութեան

Սահման վաճառականական գործերու.— Մեր յիշած գործառնութիւններէն ունանք վաճառականական են իրենց բնութեամբն իսկ, այսինքն այդ հանգամանքն ունին որո՛ւ կողմէ որ կատարուած ըլլան: Օրինակի համար, երբ պարզ անհատ մը, այսինքն ոչ-վաճառական մը, փոխանակազիր մը ստորագրէ, վաճառականական գործ մը ըրած կ'ըլլայ, ճիշտ այսպիսի թուղթ մը ստորագրող վաճառականին պէս: Կան ուրիշ գործեր ալ որք իրենց բնութեամբ վաճառականական չեն, բայց կրնան այդ հանգամանքն առնել ըստ պարագային, այսինքն երբ վաճառականի մը կողմէ կատարուին: Իսկ երբ ոչ-վաճառականի մը կողմէ կատարուին, վաճառակաւական գործ չեն նկատուիր: Վաճառականի մը ստորագրած մուրհակները կամ պայմանագրած յանձնառութիւնները իր վաճառականութեան պէտքին համար եղած կը նկատուին և հետեւապէս վաճառականական գործեր են: Բայց երբ պարագաները կամ գործին բնութիւնն իսկ ցոյց կուտան թէ վաճառականին յանձնառութիւնն իր գործին հետ առնչութիւն չունի, այն ատեն այդ գործը պարզ հանգամանք մը կ'առնէ: Այսպէս, վաճառական մը կրնայ իր անձնական պէտքին համար գինի, փայտ եւն. գնել, կամ իր ընտանիքին բնակութեան համար տուն մը վարձել եւն.: Ասոնք անշուշտ իր առևտրական գործին հետ առնչութիւն չունին, անոր պէտքին համար եղած չեն, և հետեւապէս վաճառականական գործ նկատուելու հանգամանք չունին:

Վաճառականական գործերու հետեւութիւններ.— Առաջին հետեւութիւնը սա է որ վաճառականական գործի մը առթիւ ծագում առած անհամաձայնութիւնները ո'չ թէ սովորական դատարաններու այլ մասնաւոր՝ այսինքն առևտրական՝ դատարաններու առջեւ կը հանուին, և ասիկա՛ նոյն իսկ այն պարագային երբ այդ գործը կատարողը ոչ-վաճառական մ'է: Երկրորդ հետեւութիւնը սա է որ երկու կողմանց միջեւ փոխանակուած նամակները, ինչպէս նաև առևտրական տեսրակները իրր ապացոյց կրնան ծառայել:

Բ. ՀԱՏՈՒԱԾ

Վ ա ն ա ո ա կ ա ն ց

Վանառական րլլալու պայմանները. — Հիմա քննենք թէ վաճառականն ի՞նչ նշաններով, ի՞նչ յատկութիւններով կը ճանչցուի: Մէկու մը կատարած առեւտրական մէկ կամ մի քանի գործերը բաւական չեն վաճառականի հանդամանք տալու անոր: Պէտք է որ այդ գործերը միշտ կրկնուին եւ սովորութիւն ըլլան, կամ ուրիշ խօսքով, վաճառական է ան որ իրեն սովորական գործ կ'ընէ առուտուրը: Վաճառականք ենթարկուած են մասնաւոր կանոններու, ինչպէս, երբ իրենց յանձնառութիւնները չկատարեն, սնանկ կը հռչակուին, եւ ունին ինչ ինչ պարտաւորութիւններ, օրինակի համար, տետրակ բռնել, եւն:

Վանառական, խանութպան, արհեստաւոր, եւն. — Վաճառական բառը, զոր կը գործածենք, օրինական բառն է, այսինքն ան գոր օրէնքը կը գործածէ ցոյց տալու համար վաճառականութիւնն իրենց գործ ընողները, առանց որոշելու անոնց ըրած առուտուրին բնութիւնն ու կարեւորութիւնը: Յանձնակատարները, պանքէտները, միջնորդները, նաւայարդարները, տարազագործները վաճառական (commerçant) են, ինչպէս նաեւ անոնք որ իրենց հաշուոյն ապրանք կը գնեն ու կը ծախեն: Վաճառականութեան զանազան տեսակները որոշելու համար սովորաբար տարբեր անուններ կը գործածուին: Ահա գլխաւորները. — Մասնաւորապէս վանառական (négociant) կը կոչուին անոնք որ մեծաքանակ կը ծախեն, իսկ փոքրաքանակ ծախողները կը կոչուին խանութպան (marchand): Գործարանատէրն ա՛յն է որ գործաւորներու կամ մեքենաներու օգնութեամբ արտադրութիւններու վրայ կ'աշխատի՝ նոր ձեւ մը, նոր բնութիւն մը տալու համար անոնց: Գործարանատէրն արհեստաւորին հետ շփոթելու չէ: Գործարանատէրը վաճառական (commerçant) է, մինչ արհեստաւորը՝ ո՛չ: Եւ արդարեւ վաճառական չի կրնար նկատուիլ ան որ միմիայն իր անձնական աշխատութեան վրայ շահ կ'ընէ, ո՛չ թէ նախանիւթին: Գործարանատէր կամ տարազագործ ալ չէ, այլ պարզ արհեստաւոր մը:

Գ. ՀԱՏՈՒԱԾ

Վանառականութեան ազատ րլլալը եւ կանոնի սակ առնուիլը

Վանառականութեան ազատութեան սկզբունքը. — Վաճառականութեան սկզբունքը, այսինքն վաճառականութեան այս ինչ կամ այն ինչ ճիւղը չի կրնար արգիլուիլ: Այսու հանդերձ, ընդհանուրին շահուն համար, կան ինչ ինչ բացառութիւններ, որոց վրայ պիտի խօսինք յետոյ: Միջազգային վաճառականութիւնը զարգացնելու նպատակով, Տէրութիւնք առեւտրական դաշնագրեր կնքած են որով աւելն արգելք վերցած է ասորանքներու ներածութեանց դէմ: Բայց ամէն օտար արտադրութիւնք մաքսատուրքի մը ենթարկուած են: Այս մաքսատուրքը կառավարութեանց համար օրինական շահ մը է: Եւ անոր վաճառականութեան հակադրութիւններ. — Վաճառականութեան ազատութեան նկատմամբ երկու քաջանութիւններ ունին: 1. — կարգ մը անուանութիւններ ու ճարտարարներու կանոնի տակ առնուած են: 2. — մտրիչներ ալ (կան) որքան քաջարձակապէս արգիլուած են մասնաւորներու եւ Տէրութիւնք իրենց մեծ ներդրումներով են: Կանոնի տակ անուանած ճարտարներու կամ կանոններուն մէջ յիշենք զինավաճառութիւնը որ հսկողութեան տակ կը գտնուի: Եւ այն ընկերային բաժնեկարգութեան տեսակէտով (նոյնպէս կանոնի տակ է ոսկի ու արծաթ) թիւթի շինութիւնը, իսկ այն մեծաշնորհները, որոնք կանավարութիւնք իրենց վերահսկանքն են հանրային շահուն համար, կենտրոններն են: Եւ Իրամ կոխել, վառօդ շինել, թղթատարութիւն, կենտրոնութիւնք եւն: Անճեռեցաւ սուրբին: Սկզբունք ամէն մարդ կրնայ վաճառականութիւն ընել: Սակայն բնագոյնութիւններ ալ կան: Բայ ի կարգ մը անձերէ, որք վաճառականութիւն ընելու անկարող են, եւ որոց վրայ պիտի խօսինք յաջորդ հատուածին մէջ: Վաճառականութիւնն անհաշտ է ինչ ինչ պաշտօններու հետ: Պատշաճութեան օրէնքներն յարգելու համար, վաճառականութիւն ընել արգիլուած է պաշտօնեաներուն հակադրութեան: Կոտորակներու եւն: Նոյնպէս արգիլուած է կառավարական պաշտօնատարներուն՝ շահ մ'ընել անուրդներէ զորս ստանձնած են եւ ձեռնարկութիւններէ զորս կը վարեն: Այսու հանդերձ, այս արգելքները անկարողութիւն չեն: Ենթադրելով թէ մէկը, որուն անկարողութիւնը վաճառականութիւն ընել իր պաշտօնին բերման մէջ այդ արգելքին հակառակ վաճառականական գործեր ընէ, այդ գործեր կատարելապէս ընդունելի եւ օրինաւոր կը նկատուին եւ իրենց սովորական հետեւութիւնները կ'ունենան: Միայն թէ ընողը կանոնի հակառակ շարժած եւ իր պաշտօնին մէջ թերացած նկատուելով կը պատժուի:

ԲԱՂԴԱՏԱԿԱ

ԹՈՒՐԲԻՈՅ ԵՒ ՕՏԱՐ ՏԵՐՐ

Ա. ՅՈՒՑԱԿ. — ՈՍՍ

Ծանր.	Չուտոսկի	Աստ.	Երկիր	Դրամներուն
Կրամ	Կրամ			
7,98 ³	7,31 ¹	916 ²	Անգլիա	Սղէրն = 20 շիւ. 1 շիւ = 20
6,77 ²	6,09 ⁵	900	Աւստրիա	Ոսկի 8 ֆիորին. 1 ֆիորին
3,49	3,44 ¹	986	»	Քրըմից
17,73 ²	16,25 ⁵	916 ²	Բորդուկալ	Քորոնա = 10 միլրէյ
6,45	5,80 ¹	900	Գաղղիա *	Ոսկի 20 ֆր. 1 ֆր. = 1
7,96 ³	7,16 ⁵	900	Գերմանիա	Ոսկի = 20 մարք. 1 մարք
8,96	8,06 ²	900	Դանիա	Ոսկի = 20 քրաուն
8,50	7,43 ⁵	875	Եգիպտոս	Ոսկի = 100 զրշ.
7,21 ²	6,61 ²	916	Թուրքիա	Ոսկի = 100 զրշ. 1 զրշ.
11,66 ¹	10,69 ¹	916	Հնդկաստան	Մէօհիւր = 15 բուպիյէ
6,72	6,05	900	Հոլանտա	Ոսկի = 10 կիյոմ տ'օռ
4,66 ²	4,50	900	Ճարոն	Ոսկի = 20 եէն
33,43 ²	30,08	900	Մ. Նահանգք	Արծիւ = 10 տօլար. 1 տօլար
8,96	8,06 ²	900	Շուէտ-Նորվ.	Ոսկի = 20 քրաուն
3,22 ²	2,90 ¹	900	Պարսկաստան	Թուման = 100 զրան.
6,45 ¹	5,80 ¹	900	Ռուսիա	Բօլ = 5 բուպիյի ոսկի. 1
3,92 ²	3,59 ⁵	916	»	» = 3 » »

(*) Գաղղիացիք 1788ին ուզեցին իրենց չափական Բարիզի Գիտութեանց Ակադեմիան 26 դիտուններ հրաւիրել տարի աշխատելով, որոշեցին երկրագունտն իբր հիմ բուն Բարիզի Միջօրէականին $\frac{1}{3}$ է, բաժնեցին 10 միլիոն մասի երկայնութեան չափ եւ միւս չափերն ալ մէքէրէն առին, խանակութիւնը դիւրացնելու համար Գաղղիացիք դիմում տալու համար, եւ արդարեւ 1863էն ի վեր հետզհետէ ընծ ժիա, Ռուսիա, Սպանիա, Սերպիա, Գաղղիա իբր զբաղակալական ֆրանքը), Յունաստան՝ տրախմին, Սպանիա՝ բէզ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ. — Տեսէ՛ք « Առեւ-սրական ընկերութիւններ » ը:

ԱՆԳԼԻԱ. (1. Աւստրիացիք. — 2. Կառալա-րուքիւն. Եկամուս եւ ծախս. — 3. Հաւուելիւն. — 4. Պան-խաներ. — 5. Փոխադրութիւն. — 6. Երկրագործութիւն. — 7. Արտաբնական վաճառականութիւն եւ նաւարկութիւն):

1. — Մեծն Բրիտանիայի եւ Իրլանտայի Միացեալ Թագաւորութիւնը կազմուած է շուրջ 700 կղզիներու խումբէ մը, որոց երկուքը — ամէնէն մեծերը — իրենց անունը կուտան Միացեալ Թագաւորութեան: Այդ կղզիները կը գտնուին Ատլանտեան Ովկէանոսի հիւսիսային արեւելեան կողմն եւ Եւրոպական ցամաքին արեւմտեան ծայրէն բաժնուած են բաղադատարար նեղ ծովերով, հիւսիսային լայնութեան 61-49 աստիճանին եւ արեւելեան երկայնութեան 2 ու արեւմտեան 11 աստիճանին միջեւ, կրինուելի միջօրէականով, Այս կղզիները կը կազմեն վերին մասերը լայն սարահարթի մը կամ ծանծաղուտի մը որ ցամաքէն կը տարածուի Ատլանտեան Ովկէանոսին մէջ, ծովուն մակերեսէն 500 ոտք խոր: Այս սարահարթին գոյութիւնը տնտեսական մեծ առաւելութիւն մը եղած է Անգլիոյ, ինչպէս նաեւ Եւրոպական ցամաքին արեւմտեան կողմերը բնակող ժողովրդոց համար: Անգլիան Եւրոպական ցամաքէն բաժնող ջրերուն մէջ գտնուած հոսանքներուն շնորհիւ կարելի եղած է ծովու ճամբով փոխանակութիւններ կատարել նոյն իսկ ա՛յն ատեն երբ նաւարկութեան արհեստն անձանօթ էր: Այս ընդծովեայ սարահարթին պատճառաւ առաջ եկած հըզօր մակընթացութիւններն ու տեղատուութիւնները գետերուն անցքն ազատ պահելով հաղորդակցութիւնները դիւրացուցած, ծովեզերքի գիծը երկարած եւ տնտեսական մնայուն արդիւնքներ տուած են: Այս երկու գլխաւոր կղզիներէն զատ միւսները, որոց 170ը միայն անբնակ են, այնքան կարեւորութիւն չունին: Ասոնցմէ ոմանք, ինչպէս Ուայդ, Մըլ, Սքայ եւ Աշիլ, մերձակից Թագաւորութեան մասը կը կազմեն ամէն տեսակէտով: Ուրիշներ, ինչպէս Մէն կղզին եւ Չէննըլ Այլէնտս, տնտեսապէս անկախ են: Վերջապէս

ուրիշներ ալ, ինչպէս Շէշլէնտ, թէեւ քաղաքականապէս Սկովտիոյ կը վերաբերին, բայց տնտեսական մասնաւոր կեանք մը ունին: Լաւագոյն նաւահանգիստները շինուած են Մեծն Բրիտանիոյ արեւելեան եզերքին վրայ եւ Իրլանտայի ծովին մէջ: Իրլանտայի արեւմտեան եզերքը բուռն հովերու ենթակայ է, եւ Ատլանտեանի մակընթացութիւններն ու տեղատուութիւնները չեն թողուր որ մեծ նաւահանգիստներ շինուին Լաւագոյն պայմաններու մէջ: Շէննօնի նաւահանգիստները, օրինակի համար, զուտ տեղային կարեւորութիւն մը միայն ունին, մինչ Քօրք եւ Ուօլքըրֆօրտ, Իրլանտայի հարաւային արեւելեան կողմը, և Պէլֆաստ, հիւսիսային արեւելեան կողմը, օրէ օր կը մեծնան, կը բարգաւաճին: Իրլանտայի ծովուն Անգլիական եւ Սկովտական նաւահանգիստները աշխարհի ամենամեծ նաւահանգիստներուն եւ փոխանակութեան կեդրոններուն մէջ կը հաշուուին: Այս ներքին ծովը, — Իրլանտայի ծովը — զոր երբեմն Բրիտանական Միջերկրական կը կոչեն, տնտեսական եւ ռազմագիտական ամենամեծ կարեւորութիւն ունի Անգլիոյ համար: Երկայնութիւնն է 240 մղոն և լայնութիւնն ալ գրէթէ նոյնչափ: Հիւսիսային ջրանցը, որ միայն 15 մղոն լայնութիւն ունի, Ովկէանոսի կողմէն կը կազմէ մտից դուռ մը, որուն վրայ հսկողութիւն կատարելը շատ դիւրին է: Անգլիոյ ժողովուրդը զանազան ծագումներ ունի: Կեղտացիք, Հռոմայեցիք, Դանիացիք, Սաքսոնք և Նորմանք իրարու ետեւէ տիրեցին այս երկրին եւ ձուլուեցան նախկին ժողովրդեան մէջ: Անկարելի է ճշտիւ ըսել թէ այս ինչ կամ այն ինչ տեղոյն բնակչաց արիւնն ինչ տարրերէ կազմուած է: Կեղտական ցեղն առաւելակշիռ է երկրին ծայրագոյն արեւմտեան կողմը: Դանիական արիւն և Սկանտինաւեան լեզուի հետքեր կան Սկովտիոյ արեւելեան կողմը, ինչպէս նաև Եօրքլայրի, Լինքըլնսշայրի ծովեզերեայ գաւառներուն մէջ եւ աւելի հեռու, դէպ ի հարաւ: Իսկ Սաքսոն եւ Նորման տարրերն ամէն տեղ կը գտնուին, թէեւ Իրլանտայի և Սկովտիոյ մէջ ո՛չ այնչափ: Ահաւասիկ ժողովրդեան թիւը, 1899 ին կատարուած մարդահամարին համեմատ.

	Այր	Կին	Գումար
Անգլ. և Կալլէսի երկ.	15,047,580	16,007,775	31,055,355
Սկովտիա	2,037,978	2,180,301	4,218,279
Մեծն Բրիտանիա	17,085,558	18,188,076	35,273,634
Իրլանտա	2,264,424	2,287,299	4,551,723
Միացեալ Թագաւորթ.	19,349,982	20,475,375	39,825,357

ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ

Անգլիա եւ Կալլէսի երկիր

	Այր	Կին
Ազատական ասպարէզ	597,739	328,393
Սպասաւոր	140,773	1,759,555
Առուտուրով զբաղողք	1,364,377	35,358
Երկրագործ եւ ձկնորս	1,294,919	52,026
Արհեստաւոր	5,495,446	1,840,898
Անգործ	4,708,713	7,445,660
10 տարեկանէ վար	3,460,934	3,487,734
	14,062,901	14,949,624

Սկովսիա (Ամէն հասակէ)

Ազատական ասպարէզ	75,532	35,787
Սպասաւոր	13,102	190,051
Առուտուրով զբաղողք	170,676	10,276
Երկրագործ եւ ձկնորս	219,042	30,082
Արհեստաւոր	742,036	290,368
Անգործ	722,329	1,526,366
	1,942,717	2,082,930

Իրլանդա (Ամէն հասակէ)

Ազատական ասպարէզ	138,971	75,272
Սպասաւոր	31,490	220,654
Առուտուրով զբաղողք	81,012	2,161
Երկրագործ	845,961	91,068
Արհեստաւոր	404,155	252,255
Անստոյգ	814,634	1,744,387
	<u>2,319,223</u>	<u>2,385,797</u>

Հակառակ վերջին քառորդ դարու մէջ եղած նուազման, տակաւին 2,440,000 հոգի կը պարապին երկրագործութեան: Յետոյ կուգան հիւսելական ճարտարարուեստը, որուն կ'ըզբազին 1,460,000 հոգի, վաճառականութիւնը՝ 1,160,000, հանքերը՝ 650,000, մեքենաներու շինութեան աշխատողք՝ 400,000, երկաթի ու պողպատի վրայ աշխատողք՝ 470,000, եւլն: Տնտեսական տեսակէտով Անգլիա հետեւեալ մեծ բաժանումները կը ներկայացնէ . —

1. — Հարաւ-արեւելեան դաշտագետինը, Դրէնդ եւ Սէվըրն գետերուն հարաւային կողմը: Առեւտրական, ճարտարական եւ իմացական կեանքին կեդրոնն է Լոնտոն: Տեղային երկրագործութիւնն եւ գիւղական ճարտարարուեստը մայրաքաղաքին եւ մէկ կամ երկու երկրորդական կեդրոններու պէտքերուն կը բաւեն:

2. — Ճարտարագործ Անգլիան, երեք կեդրոններով, Պիրմինկէմ, Մանչէսթըր եւ Լիտս, որոց ամենքն ալ իրենց ազդեցութեան որոշ շրջանակն ունին, բայց տնտեսապէս իրարմէ կախում ունին: Այս մասն երկու առաջնակարգ նաւահանգիստներ ունի, Լիվըրուլ եւ Հըլ:

3. — Նորթմալզըլէնտի հիւսիսային-արեւելեան կողմը Տըրհամ եւ Եօքսթըրի հիւսիսային կողմը: Երկաթի եւ ածուխի ճարտարարուեստը գերակշիռ է հոս:

4. — Սկոտական դաշտագետինը, որուն զլիաւոր կեդրոնն է Կլասքօ եւ երկրորդական կեդրոնը՝ Էտիմպուրկ:

Թ. — Ս Ո Ւ Բ Ի Ա

Բնակիչ 950,000: Տարածութիւն 62,200 քառ. քիլոմէր: Ունի 4 սանձաք. 20 քաղա, 13 նահիյէ, 1072 գիւղ:

1. — Դամասկոսի Սանճաք

1. — Պաալպէք	գիւղ	76
2. — Պէքա-էլ-ազիզ	գղխմբ. 1	» 60
3. — Վատի-էլ-աճէմ		» 82
4. — Տունա		» 74
5. — Նէպէք		» 30
6. — Հասպայա		» 18
7. — Բաշայա		» 47

2. — Համայի Սանճաք

1. — Համա	գիւղ	95
2. — Հումս	գիւղխ. 2	» 109
3. — Համիտիէ	» 1	» 61
4. — Սէլիմիէ		» 51

3. — Հօրանի Սանճաք

1. — Հօրան	գիւղխ. 3	գիւղ	53
2. — Քէնէզըրա	» 1	»	41
3. — Պասրէլ հարիր		»	36
4. — Տէրա	» 1	»	31
5. — Ճէպէլիւլտիւրուզ	» 5	»	94
6. — Էճլուն	» 1	»	120

4. — Կերիփ

1. — Սալդ	գիւղխ. 1	գիւղ	25
2. — Մասն			
3. — Թափիլէ			

Ս Վ Ա Ղ

Բնակիչ 900,000, Տարածութիւն 83,700 քառ. թիւ.
Ունի 4 սանձաք, 27 քաղա, 227 նահիլէ, 3043 գիւղ:

1. — Սվազի Սանձաք

1. — Սվազ	գղխմ.	14	գիւղ	120
2. — Ազիզիէ	»	29	»	295
3. — Քոչկէրի (Չարա)	»	21	»	238
4. — Տիվրիկ	»	9	»	124
5. — Տարէնտէ	»	6	»	14
6. — Կիւրիւն	»	3	»	40
7. — Բէնուն	»	13	»	132
8. — Հաֆիք	»	16	»	147
9. — Երլուրէ Էիի	»	9	»	155
10. — Պիւնեաէր Համիտ	»	9	»	155

2. — Ամասիայի սանձաք

1. — Ամասիա	գղխմ.	4	գիւղ	128
2. — Մարգուան	»	3	»	47
3. — Քէօբրիւ	»	8	»	160
4. — Մէճիտուզի	»	6	»	68
5. — Լպտիք	»	4	»	86
6. — Հալզա	»	4	»	86
7. — Կիւմիւր Հաճի քէօյ	»	5	»	45
8. — Օպանձըզ	»	5	»	50

3. — Գարանիսարը Շարֆի սանձաք

1. — Գարահիսարը Շարֆի	գղխմ.	5	գիւղ	77
2. — Սուչէհրի	»	6	»	130
3. — Համիտիէ	»	10	»	140
4. — Գոյուլ Հիսար	»	9	»	69
5. — Ալըճօրա	»	4	»	66

4. — Թօփաշի սանձաք

1. — Թօքատ	գղխմ.	16	գիւղ	236
2. — Արպատ	»	7	»	145
3. — Չիլէ	»	13	»	183
4. — Նիքսար	»	9	»	83

Ժ Ա. — Պ Ա Ղ Տ Ա Տ

Տարածութիւն 141,200 քառ. թիւովէր: Բնակիչ 900,000.
Ունի 3 սանձաք, 17 քաղա, 34 նահիլէ, 49 գիւղ:

1. — Պաղսաշի սանձաք

1. — Պաղտատ	գղխմ.	1		
2. — Խօրասան	»	2		
3. — Ազիզիէ	»	1	գիւղ	22
4. — Քեազիմիէ	»		»	5
5. — Չէզիբէ	»	1	»	11
6. — Տէլիմ	»	4	»	1
7. — Քիւղէլլամարա	»			
8. — Խանքիւն	»	2		
9. — Մէնտէլի Սամրա	»	1		
10. — Պէտրէ	»	1		
11. — Աննա	»	3		

2. — Տիվանիէի սանձաք

1. — Տիվանիէ	գիւղխմ.	2		
2. — Հիլէ	»	5		
3. — Սէմալէ	»	2		
4. — Շամիէ	»	4		

3. — Քերպելայի սանճագ

- 1. — Քերպելա գիւղիս. 2
- 2. — Հէնտիէ » 2
- 3. — Նէճիֆը էչրէֆ » 3
- 4. — Ձերարէ

Ժ Բ . — Է Ր Ձ Ր Ո Ի Մ

Բնակիչ 650,000 : Տարածութիւն 76,720 քառ. քիւմ.
Ունի 3 սանճաք, 20 քաղա, 69 նահիյէ, 2617 գիւղ :

1. — Երզրուսի սանճագ գիւղիս. 4 գիւղ 169

- 1. — Պայպուրդ գիւղիս. 4 գիւղ 169
- 2. — Բասէն » 4 » 236
- 3. — Խնուս » 5 » 276
- 4. — Բըլի » 5 » 206
- 5. — Թէրջան » 4 » 231
- 6. — Քէսկիմ » 4 » 68
- 7. — Իսբիբ » 4 » 134
- 8. — Թօրթուս » 2 » 62
- 9. — Նամէրվան » 3 » 95

2. — Երզնկեանի սանճագ

- 1. — Երզնկեան գիւղիս. 6 գիւղ 184
- 2. — Քէմախ » 4 » 89
- 3. — Րիֆահիյէ » 4 » 148
- 4. — Գուրուչայ » 3 » 57
- 5. — Գուրուչան » 3 » 60

3. — Պայազիսի սանճագ

- 1. — Պայազիս գիւղիս. 2 գիւղ 110
- 2. — Տիյատին » 2 » 78
- 3. — Գարա քիլիսէ » 3 » 155
- 4. — Ալաշկերտ » 2 » 93
- 5. — Անթապ » 3 » 96

Յ Ո Ւ Յ Ա Կ

Ի Թ Ե Ա Ն Յ Դ Ր Ա Մ Ն Ե Ր Ո Ւ Ն

Դ Ր Ա Մ Ն Ե Ր

Սանճագ	Ղըշ.	Փր.	Ֆր.	ՍՊ	Նիլ	Բն	Մարք	ԲՖ.	Ֆիօր	Բր
Էնա. 1 րէն = 4 ֆարթին	110	—	25	—	20	—	20	40	10	—
= 100 քրէոյց	88	—	20	—	16	—	16	20	8	—
	51	20	11	68	9	5	9	50	4	68
10 սանդիմ	246	20	56	—	44	9	45	35	22	50
= 100 ֆէնիք	88	—	20	—	16	—	16	20	8	—
	107	20	24	70	19	7	20	—	9	80
	122	05	27	77	22	3	22	50	11	15
	113	20	25	90	20	7	20	75	10	35
= 40 փր.	100	—	22	72	18	2	18	44	9	09
	162	—	36	85	30	—	29	82	15	15
	91	25	20	84	16	8	16	88	8	35
	22	35	5	20	4	8	4	18	2	08
արար = 100 սէնթ	227	35	51	80	41	6	41	96	20	55
	122	05	27	77	22	3	22	50	11	15
արան = 20 շահի	50	—	11	37	9	1	9	22	4	55
ուսլի = 100 քորէք	95	—	20	—	16	—	16	20	8	—
	56	20	12	85	10	3	10	40	5	10

Երուսթիւնն հաստատ հիման մը վրայ դնել : 1792ին,
Յ խնդիրն ուսումնասիրելու համար : Աստնք, երկու
եւ Բեւեռէն մինչեւ Հասարակած եղած միջոցը, որ
եւ անոր մէկ մասը — մէդր — ընդունեցին իբրեւ
յելով զայն Մէդրական դրութիւն : Միջազգային փո-
րին ուրիշ Տէրութեանց, այս դրութիւնը ընդունել
ուսած են Իտալիա, Յունաստան, Չուիցերիա, Պել-
լիստինա, Նափ ընդունած է Ֆրանսը, Իտալիա՝ լիբան (իտա-
լիան, Ռումանիա՝ լէյը, Սերպիա՝ դէնարը :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Ժ 4 Ո Գ Ժ Մ Ա Մ Դ Բ 8 Մ Ա Գ Գ Ժ

« Ամեն մրցում նիգ մը, հետեւապես յառաջդիմութիւն մը կ'ենթադրէ: »

Մրցումը միեւնոյն նպատակին ծառայող և միեւնոյն արդիւնքը վնասող անհատներու առեւտրական պայքարն է: Առաջ, մրցումը իբր չարիք նկատուած էր: Ետեւոր կատարի հակառակորդ էին յետը, սպառողներն, կրօնականները, սեփականութիւնը նկատողը: Երբ Բորդոնիէներուն եւ Քրիստափոր Բոլմայօսի գիւտերը նոր ներկիրներ բացին Եւրոպացիներուն առջեւ, մէն մի մոր նրկիր եւ մէն մի առարկայ առեւտրական ընկերութեան մը մենանորհն եղաւ: Եւրոպական երկիրներու մէջ 16էն մինչեւ 18րդ դար, ծովային վաճառականութիւնը 70 տարեկան ընկերութիւններու ձեռքն էր: Անոնք, մենանորհի ճակատէն տէրերու պէս, ջանային սուղ ծախել եւ իրենց հակառակորդներուն մրցումը արգելել: 18րդ դարուն, հուրնէյ եւ Քընէ կարելի եղածին չափ օտար մրցելու վարդապետութիւնը ջատագովեցին

« — Վաճառականութեան միակ կանոնն էր ըսաւ Քընէ, կարելի եղածին չափ շատ մրցել, առանց եւ եւ սեղծու մի: » Մաքսապաշտպանը կրօնէ թէ տնտեսական մրցումը վնասակար է, թէ մերթ գերարտադրութիւն եւ մերթ նուազութիւն առաջ կը բերէ, մինչ անիկա բնաւ պատասխանատու չէ մթնոլորտաբանական երեւոյթներուն համար որք առատ կամ նուազ կ'ընեն բերքերը: Բայց Միթէ կարելի է ջնջել ընկերային կեանքի մրցումը, որ միշտ գոյութիւն ունեցած է: Անգլիա, Հոլանտա եւ Ֆրանսա առեւտրական պատերազմներ մղեցին: Այդ Տէրութեանց վարիչները կը կարծէին թէ ժողովուրդ մը պէտք է իր մրցակիցները ջնջել կարստութիւնն աւելցնելու համար, եւ աշխատել աւելի ուրիշներուն աշխատիլն արգելելու հոգ տանել: Այս կարծիքը տակաւին վերջնապէս անհետացած չէ ժողովրդաց ներքին ու արտաքին քաղաքականութենէն: Մ. Նահանգաց

մաքսապաշտպանը կը պահանջեն մաքսային սակացոյցներ որ զիրենք ապահովեն արտաքին մրցումի դէմ եւ իրենց թոյլ տան հանդարտօրէն շահագործել սպառողը, դրսդներու կամ առեւտրական ընկերակցութիւններու միջոցաւ: Արծաթի կուսակիցը կը պահանջեն ամերիկեան կառավարութենէն որ հանքերու արտադրած ամբողջ արծաթն սպառեն, հանքերու տէրերն հարստացնելու համար: Ֆրանսայի Բարլամէնդին մէջ երբեմն արտադրողները կը միանան սպառողներուն դէմ: Տնտեսական մրցումին մէջ, Սդանլի Ճէվընսի ըսածին պէս, անտարբերութեան օրէնքը կամ մարդուն եւ իրի բաժանումը կայ: Այն որ Բարիզի Սակարանին մէջ ցորեն կը գնէ, ո՛չ համակրութիւն, ո՛չ հակակրութիւն ունի Շիքակոցի վաճառականին համար որ այդ ապրանքը կը ծախէ: Գնողը ներկայացուած ապրանքին կամ մատուցուած ծառայութեան արժէքն ու որակը նկատի կ'առնէ: Ասիկա երաշխաւորութիւն մ'է զոր տնտեսական մրցումը կուտայ, անհատական պատասխանատուութիւնը ապահովելով: Տնտեսական մրցումի դրութեան մէջ, արտադրողին միակ հոգն է ջանալ գոնացել ուրիշներուն պէտքը: Այս արդիւնքը ստանալէ ետքը միայն կրնայ արտադրողն իր պէտքը գոհացնել: Վաճառականին միակ փոյթն է գտնել, մինչեւ իսկ ստեղծել այս պէտքերն եւ անոնց գոհացում տալ: Արտադրողն ու վաճառականն ինքնին կը մղուին պարտաւորիչ այլապիւրբան: Արհեստաւորի մը կամ վաճառականի կրօնքնութիւնն իր յաճախորդներուն հարստութիւնն է: Անոնք չեն ուզեր որ իրենց շուրջ գտնուողներն ազգատանան, վասն զի իրենք ալ պիտի վնասուին: Անոնք գիտեն թէ իրենց տնտեսական յառաջդիմութեան միակ պայմանն է ամէնզան տնտեսական յառաջդիմութիւնը: Մրցումը իրենց անհետաձգելի պայքարն է: Երբեք անհատն անհատութեան եւ կառավարչութեան կարողութիւնները: Տնտեսական ացատ դրութեան մի մէջ հայթայթողն աւելի պէտք ունի յարստաւորելու քան որչափ յաճախորդը պէտք չունի: Հայթայթողին: Ասոր ճակատագրին է մենանորհի դրութեան մէջ: Մրտադրողը երբեք չի խորհիր իր յաճախորդին պէտքերը գոհացնելու ընտան

գոյն պայմաններու մէջ : Մրցումի հակառակորդները կ'ըսեն .

Մարդ ի մնաս ուրիշին միայն կրնայ հարստանալ :

Ջանա՛ սուղ ծախել աւելի քան շատ :

Նկատէ՛ որ յաճախորդը քեզի համար եղած է եւ ո՛չ թէ դուն յաճախորդին համար :

— Այս սկզբունքներուն սխալ ըլլալը ընդունուած է այսօր . ընդհակառակը , հետեւեալներն են ընդունուած ճշմարտութիւնները . —

Ամէն արտադրող աւելի՛ պէտք ունի ծախելու՝ քան յաճախորդը՝ գնելու :

Անհունապէս գեղշէ՛ քու յարաբերական շահը , անհունապէս աւելցնելու համար քու ամբողջական շահը :

Ինչ քարեկեցութիւնը ընդհանուրին բարեկեցութենէն կախում ունի :

Գիտութեան վրայ հիմնուած քաղաքակրթութիւններու մէջ , բարոյական մեծ զսպանակը տնտեսական մրցումն է :

Ամէն մրցում ճիգ մը , հետեւապէս յառաջդիմութիւն մը կ'ենթադրէ :

ԻՎ ԿԻԻՅՕ

Յրանսայի Հանրօգուտ Շինութեանց Նախկին Նախարար
(La morale de la Concurrence)

Յաջորդ անգամ՝ «Անուղիղ Մրցում» ին վրայ

Ա Ր Հ Ե Ս Տ Ն Ե Ր

Պ Ա Ն Ր Ա Շ Ի Ն Ո Ւ Թ Ի Ն

Դ Ա Ն Ա Ր Պ Ա Ն Ի Ր (Չափիւր բեկիւրի) , Կ Ա Ն Դ Ա Ն

Կաթը , որ ամենակատարեալ սնունդ մ'է , կազմուած է պանրածինէ , սերէ , շաքարէ , հանքային աղերէ և ջուրէ : Պանրածինը կաթին մէջ տարածուած է անտեսանելի փոքր մասնիկներով , Ա՛ն այդ մասնիկներն ի մի զօդելու մէջ կը կայանայ պանրաշինութիւնը , որուն համար երեք գործողութիւններ պէտք են . — Նախ՝ կաթը մակարդել (մայլալամալ) , պանրածինին մասնիկներն ի մի ժողովելու համար , յետոյ՝ պանրածինը զատել մնացեալ շիճուկէն և ի վերջոյ՝ այդ մակարդուած կաթը կաղապարել ամաններու մէջ , որոնց ձեւը քաղքէ քաղաք կը տարբերի : Պանիրներէն շատն ուրիշ

կարգ մը գործողութիւններու ալ կ'ենթարկուին : Կան որ՝ երկար ժամանակ պահուելու համար՝ կ'աղուին , կամ կարծրութիւն մը ստանալու համար մեքենաներու տակ կը ճընշուին և կամ մասնաւոր համ մը , հոտ մը առնելու համար քիմիական նիւթերու հետ կը խառնուին :

Եթէ նոր կթուած 8-10 օխա կաթը մակարդենք առանց սերն հանելու , մէկ օխա ընտիր եւ համով պանիր կ'ունենանք : Շատեր սերը մասամբ հանելէ ետք կը մակարդեն կաթը , որով պանիրը չոր և անհամ կ'ըլլայ : Կաթը խախտուող (պանիրի մայլալ) կը մակարդեն : Խախտուող կաթնկեր հորթին կամ գառան ստամոքսէն (խախտուող) , որուն մէջի կտրած կաթը կը թափեն , մաքուր կը լուան , կ'աղեն և ծուխին կը կախեն որ չորնայ : Յետոյ մանր մանր կը ջարդեն և մէկ օխա կտրած կաթով կամ ջրով և քիչ մը աղով կը թրջեն : 5-6 օրէն խախտուող պատրաստ է , Բայց այս կերպ պատրաստուած խախտուող երկար չի դիմանար : Ասոր համար է որ Դանիացիք հնարեցին խախտուող ծուծն ու փոշին որք երկար ատեն կը պահուին անայլայլ վիճակի մէջ : Խախտուող ծուծն հանելու համար գառան կամ հորթի 100 տրամ ստամոքս , 2½ օխա ջուր , 50 տրամ աղ և 40 տրամ ասիս պօրիփ իրար կը խառնէք : 5 օր վերջ վրան 50 տրամ աղ կ'աւելցնէք և կը մղէք (սիւզմեֆ) : Խախտուող ծուծն իր ծաւալին 10,000 անգամը կաթ կրնայ մակարդել : Դալով փոշին , թէև գործածութիւնը դիւրին է , բայց շատ զօրաւոր ըլլալուն համար դառն համ մը կուտայ պանիրին : Այս պատճառաւ յարգի չէ : Պանիր շինելու ընդհանուր կանոնը սա՛ է . — կաթը ձեռք դիմանալու չափ կամ քիչ մ'աւելի կը տաքցնեն , 50-60 օխա կաթին մէջ 2-3 դգալ խախտուող կը լեցնեն : Բնապանիրը կը զատուի և ամանին յատակը կ'իջնէ , Յետոյ այդ մակարդուած կաթին մէջէն շիճուկը կը հանեն : Այս վերջին գործողութիւնը շատ ուշադրութիւն կը պահանջէ , վասն զի շիճուկն որքան աղէկ հանուած ըլլայ մակարդուած կաթէն , պանիրն այնքան լաւ կ'ըլլայ , և ճիշտ ասոր համար է որ շատ տեղեր մամուլով կը ձնչեն պանիրը , աւելորդ շիճուկն հանելու համար :

Դալար պանիր շինելու համար կաթը կը մակարդեն, կտաւէ պարկի մը մէջ կը լեցնեն և բարձր տեղէ մը կը կախեն, տակը դոյլ մը դնելով, որպէս զի շիճուկն հոն վազէ: Եթէ մակարդուած կաթը կարծրութիւն ստանայ, ծանր մամլոյ տակ կը դնեն, որպէս զի բոլոր ջուրը վազէ, յետոյ պարկէն հանելով օդաւէտ տեղ մը, բարձր տախտակի վրայ կը շարեն և վրան բարակ աղ կ'անցընեն: 5-6 օր շարունակելու է այս գործողութիւնը, պանիրին ամէն կողմը զատ զատ դարձնելով և աղելով: Երբ պանիրին զանգուածները չորնալ սկսին, իրարու վրայ կը շարեն և ամէն օր կը տեղափոխեն էն տակինը վրան բերելով:

Կանգալը ֆրանսական շատ համով պանիր մ'է զոր շինելու համար նախ կաթը կը մակարդեն, Մակարդումը 3/4 ժամէն կ'ըլլայ: Փորձելու համար փայտէ դանակ մը կը խոթեն ամանին մէջ: Եթէ դանակը՝ աջ և ձախ դարձուելուն՝ հազիւ կաթիլ մը վազցնէ, ըսել է թէ մակարդումը կատարեալ է: Յետոյ փայտեայ լայն թաթով մը կը հարեն այդ մակարդուած կաթը: Պանրածին մասերը կը գատուին շիճուկէն և իրարու միանալով զանգուած մը կը կազմեն: Այս զանգուածը փայտեայ տաշտածև և ծակոտկէն ամանի մը մէջ կը դնեն եւ կը շաղուեն մնացած շիճուկը դուրս հանելու համար: Այսպէս երկու ժամ շարունակ թրելէ վերջ, տաշտին վրայ փայտ մը կը դնեն և անոր վրայ ալ ահազին ծանրութեամբ քարեր կը գետեղեն, մակարդուած կաթը բոլորովին մաքրելու համար շիճուկէն: Յետոյ այս պանրային զանգուածը տաշտէն կը հանեն, փայտեայ ծակոտկէն կաղապարներու մէջ կը զետեղեն և կը դնեն 18 աստիճան տաքութիւն ունեցող տեղ մը, ուր պանիրը կը խմորուի, դեղին գոյն մը կ'առնէ, և սահուն ու իւղակերպ կ'ըլլայ: Այս վիճակն ստանալուն պէս դարձեալ կաղապարներուն վրայ փայտ և փայտին վրայ ծանր քարեր կը դնեն որպէս զի շիճուկը բոլորովին դուրս ելնէ և մինակ պանիրը մնայ: Այս գործողութիւններն աւարտելէ ետք, պանիրը կը հանեն, պաղ մառանի մը մէջ կը դնեն և ամէն օր՝ 2 ամսոյ չափ՝ պաղ ջրով կը լուան: 6 ամիսէն կըրնաք ճաշակել ընտիր կանդալ մը:

Հ. Խ.

ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Մայրաքաղաքի մէջ (21. 1908) նման ամսական
 շուկայի մասին (Յօդ. 12) հարց տրուած ընդհանուր
 գնեցիկը 25 քարս սնդուս 1447 մեզր մեզրան 52 քարս էն:
 Ձեռք 16%: Կեզէք Բնագր էս, Այս գործարարներն նախ
 քաղաքի արձանագրութիւն ընկան, տեարին եւ յետոյ Օրհաշուին
 մէջ: Ընդհանուր Ապրանքը Բարեկեցի կը պատրի: Հետեւ
 ապա կը պարզեն պարտական կը երկարորը պահանջող պիտի
 ընենք մասի միջոցն առ մէջ մ մտաարմ պիտ:

Սան Վ. Բարեկեցի քաղաքի (Յօդ. 12) իմ Բարեկեցի իր պահանջ-
 քին հասար, յետոյ փայտեայ թաթով քարեց մէջ վր. 4ին վճարելի:
 Բարեկեցի այս թաթովին արեւելքը պիտի ստանայ և հետեւա-
 րէն գործողութիւնը կը շինէ: Ահա հառաւորները պիտի վճա-
 րեն եւ հետեւապէս պահանջող կը ընենք զայն: Մտտուկ չենք
 կրնար ընդհանուր քարեցի ընկեր ընդհանուր վճարումը 90 օրէն պի-
 տի ըլլայ: Վարձատնաբան տեղ պահանջող կ'ընենք մասնաւոր
 զհաշիւ կը որոշող կոշուի «Վճարելի թուղթ»: Կրնաք օ-
 ճանդակ տեղի մը խոնել այս հաշիւին համար, կամ
 Օճ Չանդակ տեղի տեղի ին մէջ անցընել:

Տեղի մէջ ամսական պահանջող մէջ
 Տեղի պայմաններ. — Կանխաւ եւ օրը օրին գիտնալու
 համար թէ՛ երբ կը լրանայ վճարելի թուղթի մը պայմանօրը,
 յատուկ տետրակ մը կը գործածուի: Եթէ վճարելի թուղ-
 թերու համար յատուկ տետրակ մը բռնած ենք արդէն, ա-
 նոր ալ կողմը կը բաժնենք ամսական սիւնակներու և հոն
 դարձանագրենք պայմանօրերն ու գումարները:

«Վճարելի քուղթ» հաշուին օգտակարութիւնը. — Այս
 հաշիւ անհրաժեշտ չէ, բայց օգտակար է: Եթէ այդ հաշիւը
 չգործածէինք, Բարեկեցի պահանջող պիտի մնար մինչեւ
 պայմանօրը, և վճարումէն ետք Բարեկեցի պարտական եւ
 սնտուկը պահանջող պիտի ընէինք: Հաշիւները նորէն կա-
 նոնաւոր եղած պիտի ըլլային: Սակայն, վաճառականի մը
 համար օգտակար է միշտ աչքին առջեւ ունենալ վճարելիք
 թուղթերը: Կրնայ կանուխէն միջոցներ ձեռք առնել վճա-

րումներուն համար և այսպէս բրօքստոյի անպատեհութեան և ծախքերուն չենթարկուիլ :

Ընդհանուր ծախս (Յօդ. 14). — Այսպէս կը կոչուին վաճառատան համար եղած ծախքերը, ինչպէս վարձք, պաշտօնէից ամսական, թուղթ, դրսւմ, ճամբու ծախք եւն : Մա կամ նա հաշուոյն մէջ չեն կրնար անցնիլ, որովհետեւ ամբողջ վաճառատան համար եղած են : Ասոր համար է որ « Ընդհանուր » կը կոչուին : Ընդհանուր ծախքերը կորուստ չեն, բայց զուտ շահը կը նուազեցնեն : Սակայն շատեր իբր կորուստ կը նկատեն և Ջէն ու Շահին կ'անցընեն : Աւելի լաւ է սակայն « Ընդհանուր Ծախք » անունով մասնաւոր հաշիւ մը ունենալ եւ պարտական ընել եղած բոլոր ծախքերուն համար : Այս կերպով, վաճառականը միշտ աչքին առջեւ կ'ունենայ զանոնք եւ ընելիք հսկողութիւնը կը դիւրանայ, Եղած ծախքերը այս հաշուին պարտքին կողմը կ'անցընենք որովհետեւ շահը կը նուազեցնեն : Շահը, իբր դրամագլուխ, պահանջքին կողմը կը գտնուի :

Սնտուկի փոքր տեսակ (Յօդ. 15). — Պաշտօնէի մը 50 կամ 100 զբշ. կը տրուի, որպէս զի վճարէ մանր ծախքերը, ինչպէս նուէր, հեռագիր եւն. եւն : Այս կերպով 10 — 20 փարայի մանր ծախքերն յաճախ չեն անցնիր Սնտուկին մեծ տետրակին մէջ : Դրամին ինչ բանի գործածուիլը զիտնալու համար, Սնտուկի պզտիկ տետրակ մը կը բռնուի :

Կարասի (Յօդ. 16). — Գրասեղան, աթոռ, անտուկ եւն : Կարասին պարտական կ'ըլլայ և անտուկը՝ որ վճարեց՝ պահանջող : Ամէն տարի այս հաշուէն մաս մը բան կը զեղչուի, որովհետեւ կարասին, գործածութեան հետեւանքով, իր իրական արժէքէն կը կորսնցնէ միշտ : Եթէ կարասիի համար եղած ծախքը Ընդհանուր ծախքին անցընենք, սխալ մ'ըրած կ'ըլլանք, վասն զի կարասին միշտ ո եւ արժէք մը ունի, մինչ Ընդհանուր ծախքին անցընելով իբր կորուստ նկատած պիտի ըլլայինք անոր համար վճարուած դրամը :

(Շարունակելի)

Գ Ի Ն Բ . Z U S Ո Ր Ի

12 Ղրուց

Գաւառաց հարւար՝ իբր բոսի ծախս՝ 3 դրուշ աւելի

ԿԱՆՆԵԻԿԻ ՀԱՄԱՐ 15 % ԶԵՂԶ

Հասցե . — ՍԻՄՐՈՆ ՉԷՕՄԼԷՔՃԵԱՆ
Ի Խմբագրատուն «Բիւզանդիոն» Հայաբերքի
Պապր Աշի ճաստեսի թիւ 23—25 Կ. Պոլիս
Կամ

ԻԶՄԻՏ ՕԹԷԼ, ԹԻԻ 24

Կ. Պոլիս, Էսկի Զապրիե հաստեսի

12 Ղրուշ

Հանրագիտակի

11 թիւը հրատարակուեցաւ պատկերազարդ Նշան

Կ. Պէրպէրեան տպարանէն ճոխ պարունակութեամբ :
Շատ հայրեր՝ իրենց տղոց ձեռքը տալիք գիրք մը ,
հանդէս մը կը փնտռեն , արդեօք չափազանցութի՞ւն կ'ըլ-
լայ եթէ ըսենք որ ՀԱՆՐԱԳԻՏԱԿ , մէկ հատիկը կրնայ հան-
դիսանալ ընտանիքներու մէջ թափանցող և դպրոցական-
ներու յատուկ է :

Տարեկան բաժնեգինն է Պոլսոյ համար 40 , վեցամսեայ՝
20 , եռամսեայ՝ 10 դէկ : Հատը 40 փարայ :

Գաւառները՝ տարեկան 45 , վեցամսեայ՝ 25 , եռամսեայ՝
12½ դէկ : Հատը 50 փարայ :

Հասցե՝ — ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ ,

Կ. Պոլիս, Էսկի Զապրիե ճատեսի, Թիւ 61 :

ՄԷՃԷՍԷ

Կամ ՕՍՄ . ՔԱՂԱՔԱՅԻՆ ՕՐԻՆԱԳԻՐՔ , հինգ
հատոր , անգեղջ 20 դրշ . — Կիսակաշի
գեղակազմ 25 դրշ : — Կեդրոնատեղի , Զաքմաքճըլար , աղ-
բիւրին կարգը , կազմարար Արշակ Մանուկեանի կազմատունը

معارف نظارت جليله سنك ۳۰۳ نومرولى وفي ۱۶ تشرين اول
سنه ۱۳۱۶ تاريخلو رخصتنامه سيهه طبع اولمشدر

«Ազգային գրադարան»



NL0083828

